

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱԲԱՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ ԱՐԱՅԻ

ԻՍՊԱՆԵՐԵՆԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈՂԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԸ

ԺԳ. 00.02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա (իսպաներեն լեզու)»  
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝

մանկավարժական գիտություններ  
դոկտոր, պրոֆեսոր

**Իգոր Կարապետի Կարապետյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր **Լուսինե Հրանտի Ֆլյան**

մանկավարժական գիտությունների թեկնածու,  
դոցենտ **Սուսաննա Պարզևի Ասատրյան**

Առաջատար կազմակերպություն՝

**Վանաձորի Հովի. Թումանյանի անվան  
պետական համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2026թ. հունիսի 30-ին ժամը 12:00-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր գիտական աստիճաններ շնորհող ԲԿԳԿ-ի 020 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0010 Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026թ. մայիսի 29-ին

Մասնագիտական խորհրդի գիտական  
քարտուղար, մանկավարժական  
գիտությունների թեկնածու, դոցենտ՝



**Թերեզա Յուրիի Ազատյան**

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ կրթական համակարգում խսպաներենի ուսուցումը բավականին հարուստ ավանդույթներ ունի: Այն վերաբերում է հատկապես խսպաներենի բառապաշարի և քերականության ուսուցմանը: Անհրաժեշտ է նշել, որ դեռևս լուրջ անելիքներ կան բառապաշարի ուսուցումը հաղորդակցական հիմքերի վրա դնելու, այն հաղորդակցական մոտեցման սկզբունքներով կազմակերպելու, ուսուցման հաղորդակցական-ճանաչողական ռազմավարություններով իրականացնելու առումով: Ինդիին ավելի է բարդանում, երբ խսպաներենի երկրագիտական բառապաշարի ուսուցման գործընթացի բարելավելու հարց է դրվում:

Հայտնի է, որ հնարավոր չէ խոսել լիարժեք, համապարփակ օտար լեզուների ուսուցման մասին՝ առանց երկրագիտական կամ ֆոնային խոր գիտելիքների: Կարևոր է նաև երկրագիտական բառապաշարի ընտրության գործընթացում այն, որ երկրագիտության դասընթացը նույնպես պետք է միտված լինի ուսուցանվող լեզուն ներկայացնող երկրի կամ երկրների մարդկանց մտածելակերպի, հասարակական, պատմամշակութային, ազգամշակութային, հոգեբանական, ընդհանուր առմամբ՝ կենսակերպի առանձնահատկությունները բացահայտելուն:

Խսպաներենի երկրագիտական անհամարժեք բառապաշարի ուսուցմանը, տեքստերի և վարժությունների ընտրությանը, մեթոդական համակարգի մշակմանը նպաստել են լեզվաերկրագիտական բաղադրամասի աստիճանական ներմուծման և յուրացման (Р. Ладо, Ж.Ласера, Е.М. Верещагин, В.Г. Костомаров, М.Б. Храпченко и др.), մշակույթի ուսումնասիրման (Р.К. Миньяр-Белоручев, М.А. Ариян, М.К. Борисенко, СМ. Кашук и др.), մշակույթի բանասիրական բաղադրամասի առանձնացման (Г.Д. Томахин, Ю.Е. Прохоров, З.Н. Никитенко, И.В. Арнольд и др.) հայեցակարգերը: Բառապաշարի, մասնավորապես անգլիցիզմների ուսուցմանն են նվիրված Լորենսո Էմիլիոյի (E. Lorenzo), Հ. Սթոունի (H. Stone) աշխատանքները: Հ. Սթոունը (H. Stone) ուսումնասիրել է անգլերենից կատարված փոխառություններն Խսպաներենում և դրանց դերը բանավոր խոսքում: Կարբոնել Բասետը (Carbonell

Basset) և Կորպաս Պաստորը (Corpas Pastor) ստեղծել են երկլեզվյան՝ իսպաներեն-անգլերեն, անգլերեն-իսպաներեն դարձվածաբանական բառարաններ: Կարևորվում է Լ. Խ. Ռոդրիգեսի, Բերնետ դե Ռոդրիգեսի (L.J. Rodríguez, J. Bernet de Rodrigues) բարբառային արտահայտությունների բառարանը: Ազգամշակութային բառապաշարի ուսուցման տեսանկյունից կարևորվում է Ռուիս Գուրիլյոյի (Ruiz Gurillo) «Խոսակցական իսպաներենի դարձվածաբանությունը» և Ֆ. Վարելայի (Varela, Kubarth) «Ժամանակակից իսպաներենի դարձվածաբանական բառարանը»: Իսպաներենի երկրագիտական տեքստերի թարգմանության տեսանկյունից կարևորվում են Բ.Հատիմի, Ի. Հասոնի (Hatim, Hason) «Թարգմանության տեսությունը», Բրավո Գոսալոյի (Bravo Gozalo) «Թարգմանություն. լեզվաբանական և մշակութային ուղղվածություններ» մենագրությունը:

Իսպաներենի երկրագիտության պատմամշակութային հայեցակերպն են լուսաբանում Խ. Բերբալես Բայեստերոսի, Ֆ. Գարսիա դե լա Կոնչա Դելգադոյի (Berbales Ballesteros, García de la Concha Delgado) «Ոսկեդարի սրբերի արձաններ ստեղծող անդալուզցի քանդակագործները», Լ. Կաբրովիայի, Պ.Կասանելլասի, Ա.Մասիպի (Cabruja, Casanellas, Massip) «Կատալունիայի պատմությունը», Կարանտե և Ռ.Տովարի (Carante y Tovar) «Իսպանիայի պատմության յոթ հետազոտություն /հատվածներ/» Աուրեա Մաթիլդա Ֆերնանդեսի ղեկավարությամբ, Մ. Կոուս Էռնանդեսի (Cruz Hernández) «Մտածելակերպի պատմությունն Ալ-Անդալուսում», Խ.Մ. Ռոլդանի (Roldán) «Իսպանիայի պատմությունը», Ա.Տովարի, Խ. Մ. Բլասկեսի (Tovar, Blázquez) «Ռոմանական Իսպանիայի պատմությունը», Պ.Վիլարի (Vilar) «Իսպանիայի պատմությունը /հատվածներ/»: Բուն երկրագիտական ուղղվածություն ունեն Գոդիոլ Ժոան Գոյայի (Gudiol J. Goya) «Բարսելոնա», Ռ. Էռնանդես Նիեվեսի (Hernández Nieves) «Մտորումներ Էքստրեմադուրայում ոսկերչության, արծաթագործության շուրջ», Խ.Մալուկեր դե Մոտեսի (Maluquer de Motes) «Տարտեսի երկրագիտությունը», Է.Օրտուետա Իլբերասի (Ortueta Hilberath) «Տարագոնայի տեսարաններն ու համապատկերները և նրա տաճարը», Ս.Կեսադայի (Quesada)

«Իսպանական երկրագիտության դասընթացը», Ս.Սանտիագոյի (Santiago) «Արվեստի պատմությունն ու խորհրդանիշները» և այլն: Կարևորվում է նաև Ա.Վ.Վարդանյանի հայերենի, իսպաներենի, անգլերենի բայի անդեմ ձևերի զուգադրական-տիպաբանական վերլուծությունը:

Համեմատական տեսանկյունից ներկայացնելով երկրագիտական բառապաշարը՝ հնարավոր է դառնում ծանոթացնել ուսանողներին ուսումնասիրվող լեզվի երկրի աշխարհագրությանը, բնական հանածոներին, քաղաքներին, բնակչության կազմին և թվին, պատմությանը, մշակույթին, հանրահոջակ մարդկանց, պատմամշակութային նշանակություն ունեցող իրադարձություններին, դեպքերին և անցքերին, մշակութային կոթողներին, հուշարձաններին, ազգային ավանդույթներին:

Միջառարկայական և ներառարկայական կապերի ապահովման տեսանկյունից նույնպես կարևորվում է իսպաներեն երկրագիտական ուղղվածության բառապաշարի ուսուցման դերը, որի յուրացումը ուսանողներին հնարավորություն է ընձեռում շարունակաբար ընդլայնել իրենց գիտելիքները թիրախային լեզվով քաղաքագիտության, ընդհանուր պատմության, փիլիսոփայության և այլ գիտական ճանաչողական ոլորտներում:

Իսպաներենի երկրագիտության դասընթացում առաջին և երկրորդ օտար լեզուների ուսուցման հիմնական բաղադրիչների կապի ապահովման համատեքստում նույնպես կարևորվում է երկրագիտական բովանդակության բառապաշարի ուսուցումը՝ որպես լեզվաբանական, հանրամշակութային, գործաբանական կարողունակությունների զարգացման անհրաժեշտ պայման, քանի որ երկրագիտական թե՛ համարժեք, թե՛ անհամարժեք կամ մշակութային նշույթավորում ունեցող բառապաշարը հնարավոր չէ յուրացնել մի լեզվի կամ դասընթացի շրջանակներում:

Իսպաներեն երկրագիտական բառապաշարի ուսուցմանը խոչընդոտում է նաև այն փաստը, որ ՀՀ-ում շրջանառվում են հիմնականում արտերկրում ստեղծված երկրագիտության դասագրքեր և ուսումնական ձեռնարկներ: Դրանից հետևում է, որ հայերենի, հայախոս ուսանողների, Հայաստանի պատմամշակութային

իրողությունները հաշվի առնելու հարցի մասին խոսք չի կարող լինել: Ինչ վերաբերում է երկրագիտական բառապաշարի հայերեն, իսպաներեն և անգլերեն զուգադրական-տիպաբանական կտրվածքով ուսուցմանը, ապա առաջարկվող մեթոդական համակարգի հիմքում ընկած բառապաշարի ուսուցման համակցված մոդելի ներդրման արդիականությունը ոչ մի կասկած չի հարուցում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ Է ուսումնասիրել «Իսպանիայի երկրագիտություն» դասընթացի կազմակերպման, նախագծման տեսությունները, մեթոդաբանական մոտեցումները, հայեցակարգերը և մշակել երկրագիտական բառապաշարի ընտրության և ուսուցման արդյունավետ մեթոդական համակարգ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ օտար լեզուներով (իսպաներեն, անգլերեն) երկրագիտության ուսուցումն է օտար լեզուների ֆակուլտետում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ իսպաներենի երկրագիտական բառապաշարի ընտրության և ուսուցման գործընթացն է օտար լեզուների ֆակուլտետում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԿԱԾԸ

Իսպաներենի երկրագիտական բառապաշարի ուսուցումը հնարավոր է արդյունավետ դարձնել, եթե

- հաշվի առնվեն հայերենի, իսպաներենի և անգլերենի լեզվաբանական և մեթոդական տիպականացման առանձնահատկությունները, ինչի արդյունքում թե՛ երկրագիտական բառապաշարի, թե՛ բուն երկրագիտության բովանդակության յուրացման արդյունավետությունը կբարձրանան,
- ուսանողներն ավելի մեծ հետաքրքրությամբ, ավելի նպատակամղված սկսեն ուսումնասիրել իսպաներենի երկրագիտական իրողությունները, որի հետևանքով կբարձրանա նրանց ինքնուրույնության աստիճանը և կզարգանա քննադատական մտածողությունը, երկրագիտական և հաղորդակցական կարողունակությունները,
- կիրառվեն երկրագիտական բառապաշարի ուսուցման փոխներգործուն ռազմավարություններ,

- մշակվի նշված դասընթացի կազմակերպման դինամիկ, օրինակելի մեթոդական համակարգ:

ՆՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԴԻՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ուսումնասիրել իսպաներենի երկրագիտական դասընթացում բառապաշարի տարբեր շերտերի ներմուծմանը, ուսուցմանը և յուրացմանը վերաբերող լեզվաբանական և մեթոդական գրականություն:

2. Հստակեցնել և սահմանել «Իսպանիայի երկրագիտություն» դասընթացին վերաբերող հասկացությունները և եզրույթները:

3. Հիմնավորել երկրագիտության և հայրենագիտության, առաջին և երկրորդ լեզուների երկրագիտական բառապաշարի համալիր, համակարգված, ինտեգրված ուսուցման անհրաժեշտությունն օտար լեզուների ֆակուլտետում:

4. Մշակել իսպաներենի երկրագիտական բառապաշարի ընտրության և ուսուցման արդյունավետ մեթոդական համակարգ:

ՆՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆԱԿԱՆ հիմքում ընկած են հայրենական և արտերկրի մեթոդաբանների, լեզվաբանների, մանկավարժ-մեթոդաբանների տեսությունները և մոտեցումները՝

- միջմշակութային-մշակութաբանական (Բ. Մ. Եսաջանյան, К. Е. Воронкова, В.В. Сафонова, J. A. Banks & C. A. Banks և այլք),
- հաղորդակցական-ճանաչողական (И.А. Стерлин, Ал. Н. Шамов, Lahuerta Galán, J. y Pujol Vila, M. և այլք),
- հանրամշակութային (Е.Н. Соловова, Е. А. Кривцова և այլք)
- տարածաշրջանային-երկրագիտական (Ի. Կ. Կարապետյան, М.В. Суханова և այլք)
- կոմպետենտային (Մ. Գ. Աստվածատրյան, Ի. Կ. Կարապետյան և այլք)
- դրդապատճառային (С. Ely և այլք)
- տրամախոսական (B. Hatim, I. Hason և այլք)
- քաղաքակրթական (J. Maluquer de Motes, S. Quesada և այլք)
- պատմագիտական (F. Soldevila, A. Tovar, J.M. Blázquez, J. Vernet, P. Vilar և այլք):

ՆՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ՝

- իսպաներենի երկրագիտական բառապաշարին առնչվող լեզվադիդակտիկական, մեթոդական գրականության վերլուծություն,
- երկրագիտական տեքստերի, խոսույթների շուրջ մշակված աշխատանքի, վարժությունների, առաջադրանքների կատարման ընթացակարգերի, ռազմավարությունների փորձարկում,
- էմպիրիկ մեթոդներ՝ դիտում, համեմատություն, չափում,
- հարցման մեթոդներ՝ հարցազրույց, անկետավորում, զրույց,

- երկրագիտական և բառային կարողունակությունների ձևավորման մակարդակի որոշման չափանիշների մշակում,
- փորձարարական ուսուցման նպատակի, խնդիրների, փուլերի հստակեցում, իրականացում:
- փորձարարական հետազոտության արդյունքների քանակական և որակական վերլուծություն:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ.

1. Մշակվել և գիտականորեն հիմնավորվել է իսպաներենի երկրագիտական բառապաշարի ընտրության և ուսուցման համալիր ռազմավարություն, որը միտված է լեզվական, մշակութային և հաղորդակցական բաղադրիչների համադրմանը ուսուցման գործընթացում:

2. Հստակեցվել են փորձարարական ուսուցման ընթացակարգերը, մեթոդները, ռազմավարությունը լեզվաբանական և մեթոդական տիպականացման տեսանկյունից,

3. Հիմնավորվել է իսպաներենի, անգլերենի և հայերենի բառային, մշակութային, միջմշակութային, գործաբանական փոխներթափանցման երևույթների կանխման և հաղթահարման մեթոդական համակարգը, ըստ որի՝ ուսուցման բոլոր փուլերում իսպաներենի, անգլերենի երկրագիտական ուղղվածության բառապաշարի ուսուցումը նպաստում է ոչ միայն մասնագիտական բառապաշարի յուրացմանը, այլև գործաբանական, միջմշակութային, հաղորդակցական կարողունակությունների ձևավորմանն ու զարգացմանը:

4. Առաջարկվել է երկրագիտական բառապաշարի ուսուցման փուլային մոդել, որը ապահովում է բառապաշարի իմաստային ընկալում, ակտիվացում և իրական հաղորդակցական իրավիճակներում գործնական կիրառում՝ հաշվի առնելով ուսանողների տարիքային և ճանաչողական առանձնահատկությունները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնասիրվել են իսպաներենի երկրագիտական բառապաշարի ընտրության և ուսուցման տեսական և մեթոդաբանական հիմքերը, ռազմավարությունները, տեխնոլոգիաները, ստեղծվել է իսպաներենի երկրագիտական բառապաշարի ուսուցման օրինակելի կաղապար, որն ընկած է իսպաներենի երկրագիտական կարողունակության ձևավորման մեթոդական համակարգի հիմքում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Մշակվել է նախախոսքային, խոսքային, թարգմանական առաջադրանքների և վարժությունների դինամիկ համակարգ, որն արդյունավետ գործիք է իսպաներենի երկրագիտական ուղղվածության բառապաշարի տեսական և գործնական, ինչպես նաև համակցված դասընթացներում կիրառելու համար: Հետազոտության վերջնարդյունքները կարող են հաջողությամբ կիրառվել մասնագիտական իսպաներենի նոր դասընթացների նախագծման, դասագրքահամալիրների ստեղծման, ընդհանրապես դասավանդման ոլորտներում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՎԱՍՏԻՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ

ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ապահովվում են կիրառված վերլուծական ընթացակարգերով, դրանց ընտրության և հիմնավորման մեթոդաբանությամբ, թե՛ հետազոտական, թե՛ ուսուցման տեխնոլոգիաների և մեթոդների հիմնավորված գործածությամբ, հետազոտության առարկայի և օբյեկտի սահմաններում փորձարարական ուսուցման արդյունքների վերլուծության և ամփոփման հուսալիությամբ:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտության արդյունքները քննարկվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ուսումնասիրությունները կատարվել են ՀՊՄՀ-ի օտար լեզուների և Ռուսաստանի Տուրիզմի և Սերվիզի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղի, Հայ-սլավոնական համալսարանի համապատասխան ֆակուլտետներում:

Հետազոտությունն իրականացվել է հինգ տարվա ընթացքում հետևյալ փուլերով.

Առաջին փուլում (2009-2011) ուսումնասիրվել է համապատասխան լեզվաբանական և մեթոդական գրականություն, որոշվել է հետազոտության բովանդակությունը, հստակեցվել հետազոտության կատեգորիալ-հասկացական ապարատը:

Երկրորդ փուլում (2011-2014) իրականացվել է հաստատող գիտափորձ: Ուրվագծվել են առաջադրվող իսպաներենի երկրագիտության ուսուցման կաղապարի բաղադրիչները: Ընտրվել են այն տեքստերը, առաջադրանքները և վարժությունները, որոնք կարող են կիրառվել ուսուցման տարբեր փուլերում՝ ի հավելումն շրջանառվող դասագրքերի:

Երրորդ փուլում (2014-2015) իրականացվել է փորձարարական ուսուցում, ամբողջացվել է վարժությունների համակարգը, կոնկրետացվել է առարկայական նկարագրերում դրանց կատարման ժամանակացույցը՝ ըստ մոդուլների: Ավարտական փուլում ամփոփվել են հետեզոտության արդյունքները:

Չորրորդ փուլում (2025- 2026) իրականացվել է թարմացված հարցաշարով հարցախույզ Հայաստանի Ֆրանսիական համալսարանի ուսանողների և Անատոլ Ֆրանսի անվան ֆրանսիական միջազգային կրթահամալիրի ավագ դպրոցի աշակերտների հետ համատեղ:

#### ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ

Հետազոտության արդյունքները ներդրվել են ՀՊՄՀ-ի օտար լեզուների ֆակուլտետում և Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղում: Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են վեց հոդվածում:

#### ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ.

1. Իսպաներեն լեզվակիրների հաղորդակցական վարքագծի ուսումնասիրությունը հիմք է ստեղծում Իսպանիայի երկրագիտական բառապաշարի յուրացման համար: Այդ համատեքստում առաջին պլան են մղվում օտար լեզուների ուսուցման անձնակենտրոն, փոխներգործուն մեթոդները:

2. Բազմամշակութային բովանդակության համակցված կաղապարի, մասնավորապես բազմամշակութային բովանդակության հավելման, փոխակերպական, հասարակական գործունեության մոտեցումների կիրառումն ուսանողներին ընձեռում է տվյալ երկրի լեզվաերկրագիտության իրողությունները

տարբեր՝ տեղական, միջազգային, միջպետական մակարդակներում ուսումնասիրելու հնարավորություն:

3. Գիտաերկրագիտական, գիտահանրամատչելի, գեղարվեստական բնագրերի, ֆիլմերի սկրիպտների, տարբեր հաղորդումների շուրջ իրականացվող նախագծային աշխատանքները, քննարկումները, փոխներգործուն դասախոսություններն ու սեմինարները իսպաներենի երկրագիտական դասընթացը դարձնում են հետաքրքիր, ուսանողների ներքին և գործնական դրդապատճառների տեսանկյունից՝ նպատակադիրքորոշող, նոր տեղեկատվության ուսումնասիրության տեսանկյունից՝ հագեցած, նոր բառապաշարի յուրացման տեսանկյունից՝ արդյունավետ:

4. Գիտության, մշակույթի, արվեստի տարբեր ոլորտների բնագրերի, խոսույթների հետևողական ուսումնասիրությունը հիմք է ստեղծում իսպանալեզու մարդկանց խոսքային և ոչ խոսքային, հաղորդակցական վարքագիծը ուսումնասիրելու, վարքագծային կաղապարները յուրացնելու համար: Խոսքային-ստեղծագործական տարբեր վարժությունների և առաջադրանքների՝ ըստ դասանյութի յուրացման դժվարության ընտրությունը և կիրառումը դարձնում են տվյալ դասընթացը ց՛կյանս լեզվակրթության անքակտելի բաղադրիչ:

#### ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ և ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, գծապատկերներից, աղյուսակներից, բնագիր տեքստերից և հավելվածներից: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 155 էջ:

#### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Հետազոտության «Լեզվաերկրագիտական իրազեկության զարգացման առանձնահատկությունները լեզվական բուհում» առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ **«Իսպանիայի երկրագիտության բուհական դասընթացի առանձնահատկություններն արդի փուլում»** ենթազբյուրում վերլուծվում է իսպաներենի երկրագիտությունը որպես ուսումնական առարկա, դիտարկելով այն միջառարկայական, ներառարկայական կապերի ապահովման տեսանկյունից: Ներկայացվում են իսպաներեն երկրագիտական բնագրերի տեղեկատվական, կրթադաստիարակչական, զարգացնող, ճանաչողական գործառույթները, ինչպես նաև լեզվաերկրագիտական թղթապանակը որպես Իսպանիայի երկրագիտության ուսուցման ժամանակակից մեթոդ:

Երկրորդ ենթազբյուրում՝ **«Օտար լեզուների ֆակուլտետում դասավանդվող «Իսպանիայի երկրագիտություն» դասընթացի հիմնական բաղադրամասերը»** ներկայացվում է բուհական համակարգում Իսպանիայի երկրագիտության ուսուցման ներկա վիճակը, դասակարգվում են նրա ուսուցման մեթոդները, սկզբունքները: Առաջադրվում է Իսպանիայի, Հայաստանի և Անգլիայի երկրագիտության դասընթացների ինտեգրման գաղափարը:

Երրորդ ենթազբյուրում՝ **«Հանրամշակութային իրույթների ուսուցումը և տիպաբանական բնութագիրը Իսպանիայի երկրագիտության մասնագիտական դասընթացում»** ներկայացվում են հաղորդակցական իրազեկության հիմնական բաղադրիչները, կարևորվում է անհամարժեք բառապաշարի, մասնավորապես էթնոմշակութային լակունաների ուսուցման հիմնախնդիրը, սահմանվում է «մշակութային տարածաշրջան» հասկացությունը: Վերլուծվում են «կենսակերպ» և «մտածելակերպ» հասկացությունները էթնոգրաֆիկ լակունաների ուսուցման և յուրացման տեսանկյունից: Այդ համատեքստում ուսանողների հենքային գիտելիքների ձևավորման գործում առաջին պլան եմ մղվում «մշակութային ֆոնդի լակունաները», որոնք ներկայացնում են տվյալ էթնոսի, հասարակության ավանդույթները, թե՛ սովորույթները, թե՛ տոներն ու ծեսերը:

Նշվում է նաև, որ երկրագիտական նյութի յուրացմանը միտված նախագծային աշխատանքները նպաստում են միջառարկայական կապերի ամրապնդմանը,

ապահովում են ուսանողների ակտիվ մասնակցությունը, բացահայտում են նրանց ստեղծագործական կարողությունները, զարգացնում են նրանց քննադատական մտածողությունը:

Երկրորդ՝ **«Իսպաներենի դասընթացի միջոցով երկրագիտական բառապաշարի ուսուցման մեթոդական հիմունքները»** գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին՝ **«Իսպաներենի երկրագիտական բառապաշարի ուսուցման մեթոդական հիմունքները»** ենթագլխում ներկայացված են երկրագիտական բառապաշարի ուսուցման արդյունավետ կաղապարները:

Հանգամանորեն ներկայացվում և վերլուծվում են մեթոդիստների և լեզվաբանների առանձնացրած հենքային գիտելիքների տեսակները: Քննության են առնվում հայերեն, ռուսերեն, իսպաներեն և անգլերեն երկրագիտական հասկացությունների փոխներթափանցման դրսևորումները:

Երկրորդ՝ **«Իսպաներենի երկրագիտական անհամարժեք բառապաշարի ուսուցումը լեզվական բուռում»** ենթագլխում ներկայացված են այն միջնորդ լեզուները, որոնք ուղղակի կամ անուղղակիորեն ազդում են բառապաշարի ուսուցման և հարստացման վրա:

Ներկայացվում են Spanglish-ի մասին ընդհանուր տեղեկություններ և կոնկրետ օրինակներով բացահայտվում են նրա առանձնահատկությունները: Երկրագիտական բառապաշարի ուսուցման տեսանկյունից հիմնավորվում է Spanglish-ին վերաբերող լեզվաերկրագիտական տեքստերի հետ աշխատանքի արդյունավետությունը, քանի որ այդպիսի աշխատանքը հնարավորություն է տալիս իրականացնել բուն իսպաներեն և անգլերեն բառապաշարի տիպաբանական, ծագումնաբանական վերլուծություն, բացահայտել նրանցում երկրագիտական լեզվանյութը:

Երրորդ՝ **«Երկրագիտական, հայրենագիտական և տարածաշրջանային բաղադրամասերի համամասնական ուսուցումը իսպաներենի երկրագիտական դասընթացի միջոցով»** ենթագլխում ներկայացվում են զարգացած երկրներում իրականացվող բարեփոխումները և դրա ֆոնի վրա ՀՀ կրթական համակարգը, ինչպես նաև իսպաներեն երկրագիտական ենթալեզվի ուսուցման կաղապարը:

Կարևորվում է տարածաշրջանային բաղադրամասին վերաբերող հասկացությունների, տերմինների, տեղանունների իսպաներեն ճիշտ արտասանության ուսուցումը, քանի որ գրեթե բոլոր հայկական տեղանունները գրադարձման պատճառով այլ արտասանություն ունեն, երբ համեմատում ենք իսպաներեն համարժեքների հետ:

Վերջին՝ «**Իսպաներենի երկրագիտական բառապաշարի ուսուցման մեթոդական համակարգի արդյունավետության փորձարարական հիմնավորում**» ենթագլխում ներկայացվում են այն վարժությունները, որոնք կարևորվում են իսպաներենի երկրագիտական դասընթացում:

Առաջարկվող վարժությունների համակարգի հիմքում ընկած է Իսպանիայի երկրագիտության ուսուցման կաղապարը, որը ներառում է տեքստերի և վարժությունների ընտրության մեթոդաբանական մոտեցումները, տեքստերի և բառապաշարի ուսուցման սկզբունքները, բառապաշարի ուսուցման տեխնոլոգիաները, մեթոդները (թեմատիկ, առարկայական-լեզվական սկզբունք, բառապաշարի ուսուցման և խոսքային գործունեության միասնության հնարները): Ինչպես նաև հաղորդակցական-ճանաչողական մոտեցման սկզբունքները՝ բառապաշարի համակարգ ձևավորող դերը, սովորողների լեզվական կրթության մեջ բառային առաջնահերթությունը, ճանաչողական գործունեության և կաղապարների համապատասխանությունը, մտածելակերպի բաղադրիչների ստուգումը, բառապաշարի բովանդակության ուսուցման և իրականության համապատասխանությունը, հանրամշակութային նշանակության միավորների ընտրությունը:

Առանձնացված են Իսպանիայի երկրագիտության ուսուցման մեթոդները /լեզվաերկրագիտական թղթապանակ, դասախոսություն, նախագծային մեթոդ, համակցված մեթոդներ և անձնակողմնորոշիչ մեթոդներ և մեթոդական հնարներ՝ մտագրոհ. ջիգսո, նախագծային քննարկումներ/, ինչպես նաև արդյունավետ և ոչ արդյունավետ բառակազմական կաղապարների կիրառում, ուսանողներին հետազոտական աշխատանքի մեջ ներգրավելու, իմաստային, լեզվահամակարգող և ճանաչողական-հասկացութային կամ լեզվամշակութաբանական ռազմավարություններ:

Համակցված կամ փոխներգործուն մեթոդների կիրառման տեսանկյունից նպատակահարմար է ուսուցման միջին և ավարտական փուլերում կիրառել երգեր, ֆիլմեր, մուլտիպլիկացիոն ֆիլմեր, ռադիոհաղորդումներ, հայտնի դերասանների կողմից մենախոսություններ, գովազդներ և այլն:

Վերոնշյալ մեթոդների և մեթոդական հնարների արդյունավետությունը գործնականում ստուգելու նպատակով կազմակերպվել և իրականացվել է գիտափորձ, որին մասնակցել են 122 ուսանող, որոնք կազմել են հետազոտության ընտրանքը ( $n = 122$ ): Գիտափորձի շրջանակում ձևավորվել են երրորդ կուրսի ուսանողների մասնակցությամբ փորձարարական (52 ուսանող) և ստուգողական (70 ուսանող) խմբեր (լեզվի իմացության B1 մակարդակի). վերջիններս ներկայացնում

էին երկու բուիեր՝ 52 ուսանող՝ Մոսկվայի սերվիզի ինստիտուտից և 66 ուսանող՝ Հայ-սլավոնական համալսարանից: Նման բաշխումը հնարավորություն է տվել ապահովել հետազոտության արդյունքների համադրելիությունն ու հավաստիությունը:

Փորձարարական ուսուցման արդյունավետությունն ստուգելու համար մշակվել են հստակ չափանիշներ: Փորձարարական ուսուցման նպատակն է հստակեցնել, թե ինչպես են նպաստում ուսանողների առաջադիմությանը ընտրված վարժությունները և տեքստերը: Ուսանողների երկրագիտական կոմպետենցիայի ձևավորման և զարգացման գործընթացը ստուգվել և վերահսկվել է՝ հաշվի առնելով ուսանողների լեզվաերկրագիտական գիտելիքները:

Փորձարարական ուսուցման ավարտին համեմատվել են փորձարարական և ստուգողական խմբերի արդյունքները: Ստացված տվյալների վիճակագրական վերլուծությունը ցույց է տալիս, որ երկու խմբերում էլ արձանագրվել է որոշակի առաջադիմություն, սակայն այն զգալիորեն ավելի բարձր է փորձարարական խմբում: Մասնավորապես ստուգողական խմբում առաջընթացը կազմել է միջինը 1.73 միավոր, ինչը կազմում է մոտավորապես 16% առաջընթաց: Մինչդեռ փորձարարական խմբում այն հասել է 5.55 միավորի, այսինքն՝ արձանագրվել է մոտավորապես 49% աճ:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

1. Ժամանակակից երկրագիտական ուղղվածության դասընթացները շեշտադրում են գործաբանական հայեցակերպի դերը, քանի որ հենքային գիտելիքների հիմքում ընկած է այն փորձը, որն ունեն հաղորդակցվողները լեզվակիրների հաղորդակցական վարքագծի մասին:
2. Լեզվաբանական և մեթոդական գործառույթ է կատարում տեղեկատվական, գաղափարախոսական, ընդհանրապես մշակութային բացերի շուրջ աշխատանքը: Ուսանողները հաղթահարում են տարբեր բնույթի դժվարություններ, որոնք վերաբերում են ոչ միայն նորմատիվ, անհամարժեք բառապաշարի յուրացմանը, այլև բառ-իրակությունների և առարկա-իրակությունների ուսումնասիրությանը:
3. Երկրագիտության դասընթացը կարող է լինել հետաքրքիր, արդիական, սեփական մտահոգություններին, հարցադրումներին համահունչ, երբ ուսանողները ծանոթանում են Իսպանիայի արդի խնդիրներին՝ հաշվի առնելով Հայաստանում գոյություն ունեցող նման նմանատեսակ իրողությունները:
4. Տվյալ դասընթացը նախագծելիս կարևորվում է Բանկսի բազմամշակութային բովանդակության համակցված կադապարը կամ համակցված կադապարի չորս մակարդակները, որոնք հիմնվում են ուսանողների նախնական գիտելիքների վրա,

ինչպես նաև բազմամշակութային բովանդակության հավելման մոտեցումը, որը հաջող փորձ է երկրաբանության ուսուցումը հասարակական հիմքի վրա դնելու համար: Արդյունավետ է փոխակերպական մոտեցման կիրառումը, քանի որ ուսանողները հնավորություն են ստանում դիտարկելու համապատասխան հասկացությունները, գերհասկացությունները և թեմաները տարբեր էթնիկական խմբերի տեսանկյունից: Արդյունավետ է կիրառել հասարակական գործունեության մոտեցումը, ըստ որի՝ ուսանողները լիազորված են հանդես գալ որպես հասարակական կյանքի լիիրավ անդամներ:

5. Երկրագիտական բնույթի իրականությունների և բացերի տեսանկյունից կարևորվում է առարկայական անհամարժեքությունը, երբ ուսումնասիրվող լեզվով արտահայտվող շատ առարկաներ, երևույթներ բացակայում են մայրենի լեզվում: Անհամարժեքություն է դիտարկվում նաև ոճական մակարդակում, երբ նույն հասկացությունները նույն ոճով չեն արտահայտվում:

6. Դժվարություն են ներկայացնում յուրացման տեսանկյունից «մշակութային ֆոնդի լակունաները», քանի որ դրանք կարող են տարբերվել Իսպանիայի տարբեր վարչական տարածքներում:

7. Երկրագիտական խոսույթի միջոցով բառապաշարի ներմուծումը և յուրացումը պահանջում են տարբեր ռազմավարություններ, որոնք ներառում են հաղորդակցական մոտեցման շրջանակներում ձևավորված վարժություններ, դերասյուժետային խաղեր և այլն: Կարևորն այն է, որ շեշտը դրվում է ոչ թե բառային միավորների ճիշտ վերարտադրման, այլ խոսույթների խորացված զարգացման վրա:

8. Մեթոդական մակարդակում երկրագիտության համակցված դասընթացում հայրենագիտական բաղադրիչը հիմք է ստեղծում ուսանողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման, ինքնակրթության ունակությունների ձևավորման համար:

9. Փորձարարական ուսուցման արդյունքները հաստատում են ստեղծված կաղապարի արդյունավետությունը, քանի որ իսպաներենի երկրագիտության համակցված դասընթացը կազմակերպելիս անհրաժեշտ է հաշվի առնել հայերենի, երկրորդ և երրորդ ուսուցանվող օտար լեզուների, դրանց կրողների մշակութային, կենսակերպի և մտածելակերպի առանձնահատկությունները, որոնք կարող են հիմք հանդիսանալ շատ արագ յուրացնելու ընդհանրություն ունեցող լեզվամշակութային իրողությունները և կանխել, հաղթահարել լեզվաբանական, մշակութային, միջմշակութային, խոսութային բնույթի փոխներթափանցման դրսևորումները:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ աշխատանքներում.**

1. *Իսպանիայի երկրագիտության բուհական դասընթացի առանձնահատկություններն արդի փուլում.* //Տաթև գիտակրթական համալիր «Մանկավարժական միտք» 1-2 (40-41): Զանգակ հրատարակչություն, Եր., 2011, էջ 48-52
2. *Բնագրային տեքստերի ընտրության հիմնախնդիրը Իսպանիայի երկրագիտության դասընթացում.* //Տաթև գիտակրթական համալիր «Մանկավարժական միտք» 3-4 (40-41): Զանգակ հրատ., Եր., 2011, էջ 86-90
3. *Իսպանիայի երկրագիտության ուսուցման ուղղվածության ընտրության հիմնախնդիրը.* //«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան; գիտամեթոդական հանդես; հասարակական գիտություններ 4(28), Վանաձոր, 2010, էջ 206-209
4. *Իսպաներենի երկրագիտական բառապաշարի ուսուցման ընթացակարգերը.* //Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան: Լեզվաբանություն և բանասիրություն 1 (38): - «ԼԻՆԳՎԱ» հրատարակչություն, Եր., 2016, էջ 110-119
5. *Իսպանիայի երկրագիտության բառապաշարի ուսուցման սկզբունքները.* //«Մխիթար Գոշ» հայ-ռուսական միջազգային համալսարան; գիտական հոդվածներ 2(45), Վանաձոր, 2016, էջ 162-166
6. *Իսպաներեն երկրագիտական բառապաշարի փորձարարական ուսուցման արդյունքները.* // Տաթև գիտակրթական համալիր «Մանկավարժական միտք» 3-4 (62-63): Զանգակ հրատարակչություն, Եր., 2011, էջ 145-149
7. SPANGLISH-ի ուսումնասիրությունը որպես երկրագիտական բառապաշարի յուրացման միջոց. // Գիտավերլուծական հանդես «Տարածաշրջան և աշխարհ» հատոր X, N4, Եր., 2019, էջ 161-166
8. *Իսպաներեն-անգլերեն լեզվական փոխներթափանցումը և դրա դասավանդման մեթոդիկական երկրագիտական համատեքստում.* // «Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի մանկավարժություն և հասարակական գիտություններ», 2(75): - «ԼԻՆԳՎԱ» հրատարակչություն, Եր., 2026, էջ 83-95

БАБАЯН КРИСТИНЕ АРАЕВНА

## МЕТОДИЧЕСКАЯ СИСТЕМА ОБУЧЕНИЯ СТРАНОВЕДЧЕСКОЙ ЛЕКСИКЕ ИСПАНСКОГО ЯЗЫКА

Диссертация на соискание учёной степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 — «Методика преподавания и обучения» (испанский язык). Защита диссертации состоится в 12:00 часов 30 мая 2026 года на заседании специализированного совета 020 «Педагогика» КВОН при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна. Адрес: 0010, г. Ереван, пр. Тиграна Меца, 17.

### РЕЗЮМЕ

В диссертационном исследовании рассматривается проблема обучения испанской страноведческой лексике в профессиональном курсе испанского языка.

**Актуальность исследования** на нынешнем этапе невозможно рассмотреть проблему обучения страноведческой лексике испанского языка без соответствующих страноведческих или фоновых знаний. Не секрет, что любой язык представляет только характерные для него страноведческие реалии, термины, понятия, концепты, в целом безэквивалентную лексику. В процессе отбора страноведческой лексики важно учесть также то, что курс страноведения должен быть направлен на выявление ментальных, общественных, историко-культурных, национально-культурных, психологических особенностей, в целом образа жизни носителей языка.

С точки зрения обеспечения межпредметных и внутриспредметных связей то же подчеркивается значение обучения страноведческой лексике испанского языка, усвоение которой позволяет студентам бесперерывно расширять свои знания на изучаемом языке в научно-познавательных сферах политики, общей истории, философии и т.д..

Значение обучения лексике страноведческого содержания подчеркивается в контексте обеспечения связи основных компонентов обучения первого и второго языков как необходимое условие развития лингвистической, социально-культурной, прагматической, в целом коммуникативной компетенции, так как невозможно усвоить ни стандартную, ни культурно-маркированную лексику в рамках обучения одному языку или организации курса страноведения.

Не благоприятным условием обучения страноведческой лексики испанского языка является то, что в РА в основном функционируют учебники и учебные пособия по страноведению испанского языка, созданные за рубежом. Отсюда следует, что в них не учтены историко-культурные реалии Армении, армянского языка и армяноязычных студентов. Что касается обучения в сравнительно-типологическом срезе страноведческой лексики, то актуальность внедрения интегративной модели обучения лексики в предложенной методической системе не вызывает сомнения.

### ***Цель исследования***

Изучить основные лингвистические и методические подходы к организации, проектированию курса страноведения испанского языка и выявить особенности данного курса, разработать методическую систему отбора и обучения страноведческой лексики испанского языка.

### **Задачи исследования:**

1. Изучить лингвистическую и методическую литературу по вводу, обучению и усвоению разных слоев страноведческой лексики испанского языка.
2. Уточнить и определить основные понятия и термины, относящиеся к курсу страноведения Испании.
3. Обосновать необходимость комплексного, системного, интегративного обучения страноведческой лексики первого и второго языков.
4. Разработать продуктивную модель отбора и обучения страноведческой лексики испанского языка.

### **Научная новизна исследования.**

1. Разработана и научно обоснована комплексная стратегия отбора и обучения страноведческой лексики испанского языка, направленная на интеграцию языковых, культурных и коммуникативных компонентов в процессе обучения.
2. Уточнены процедуры экспериментального обучения, методы и стратегия с точки зрения лингвистической и методической типологизации.
3. Обоснована методическая система предупреждения и преодоления явлений лексической, культурной, межкультурной и прагматической интерференции испанского, английского и армянского языков, согласно которой обучение страноведчески ориентированной лексики испанского и английского языков на всех этапах способствует не только усвоению профессиональной лексики, но и формированию и развитию прагматической, межкультурной и коммуникативной компетенций.

4. Предложена поэтапная модель обучения страноведческой лексике, обеспечивающая семантическое осмысление, активизацию и практическое применение лексики в реальных коммуникативных ситуациях с учётом возрастных и когнитивных особенностей обучающихся.

**Теоретическое значение исследования:**

Изучены теоретические и методологические основы, стратегии, технологии отбора и обучения страноведческой лексике испанского языка.

Создана примерная модель обучения страноведческой лексике испанского языка, которая лежит в основе методической системы формирования страноведческой компетенции испанского языка.

**Практическое значение исследования.**

Разработана динамическая система предречевых, речевых, переводческих задач и упражнений, которая является эффективным инструментом для применения в теоретических, практических, а также в интергративных курсах страноведения испанского языка. Результаты исследования могут быть успешно использованы при проектировании новых курсов страноведения испанского языка, при создании учебно-методических комплексов, в процессе преподавании иностранных языков:

**Содержание исследования** отражено в структуре диссертации, которая состоит из введения, двух глав, заключения, библиографии и приложений. Основное содержание диссертации изложено на 155 страницах.

По теме диссертации опубликованы восемь научных статей.

KRISTINE ARA BABAYAN

**METHODICAL SYSTEM OF TEACHING SPANISH AREA VOCABULARY**

Thesis for the degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.02 - "Teaching and Learning methodology" (Spanish).

The defense of the thesis will be held at 12<sup>00</sup> on May 30, 2026 at the session of the Special Board 020 "Pedagogy" HESC to award degrees under the Armenian State Pedagogical University. After Kh. Abovyan, Address: 0010, Tigran Mets ave. 17, Yerevan. 0010

**SUMMARY**

The dissertation studies the problem of teaching Spanish area vocabulary in the professional course of Spanish.

**The relevance of research.** At present time it is impossible to consider the problem of teaching Spanish area studies vocabulary without the appropriate regional or background knowledge. It's no secret that any language represents only typical of its regional, geographic realities, terms, notions, concepts, in general, non-equivalent vocabulary. In the process of selecting area studies' vocabulary it is also important that this course should be aimed at revealing the mental, social, historical-cultural, national-cultural, psychological characteristics, as well as the lifestyle of native speakers.

From the point of view of ensuring interdisciplinary and intrasubject connections, the importance of teaching the Spanish area studies vocabulary is also emphasized, the assimilation of which allows students continuously to expand their knowledge in the target language in the scientific and cognitive spheres of politics, general history, philosophy, etc.

The importance of teaching Spanish area studies vocabulary is emphasized in the context of ensuring the connection of the main components of teaching the first and second languages as a prerequisite for the development of linguistic, socio-cultural, pragmatic, and in general communicative competence, since it is impossible to learn either standard or culture-bound vocabulary or organize any area studies courses.

An unfavorable condition for studying Spanish area studies vocabulary is that the textbooks and manuals circulating in RA on Spanish area studies are created abroad. It means that they do not take into account the historical and cultural realities of Armenia, Armenian language and Armenian-speaking students. As for teaching Spanish area studies vocabulary from the standpoint of its comparative-typological aspects, the vitality of integrative model of teaching Spanish area studies vocabulary which lies in the proposed methodical system is not in doubt.

### **The aim of the research**

To identify approaches to organizing, designing Spanish area studies course and to reveal the peculiarities of this course, to develop a methodical system of selecting and teaching culture-specific Spanish vocabulary.

### **The objectives of the research:**

1. To identify the linguistic and methodical literature on the introducing, teaching and mastering the different layers of Spanish area studies vocabulary .
2. To clarify and define the basic concepts and terms relating to Spanish area studies vocabulary teaching course.
3. To substantiate the necessity for integrated, systemic, integrative teaching area studies' vocabulary the first and second languages.

4. Develop a productive model of selecting and teaching Spanish area studies vocabulary. **The content of the research** is reflected in the structure of the dissertation, which consists of an introduction, two chapters, conclusion, bibliography and applications.

**Scientific novelty of the research:**

1. A comprehensive strategy for the selection and teaching of Spanish country studies (culture-oriented) vocabulary has been developed and scientifically substantiated, aimed at integrating linguistic, cultural, and communicative components in the teaching process.

2. The procedures of experimental instruction, as well as the methods and strategy, have been specified from the perspective of linguistic and methodological typologization.

3. A methodological system for preventing and overcoming lexical, cultural, intercultural, and pragmatic interference among Spanish, English, and Armenian has been substantiated. According to this system, teaching country studies-oriented vocabulary in Spanish and English at all stages contributes not only to the acquisition of professional vocabulary but also to the formation and development of pragmatic, intercultural, and communicative competences.

4. A stage-based model for teaching country studies vocabulary has been proposed, ensuring semantic comprehension, activation, and practical application of vocabulary in real communicative situations, taking into account learners' age and cognitive characteristics.

**Theoretical significance of the research:**

It studies the theories and methodological foundations, strategies, technologies of selecting and teaching Spanish area studies vocabulary.

It has created an effective model of teaching Spanish area studies vocabulary, which underlies the methodological system to form Spanish area studies' competence.

**Practical significance of the research:**

A dynamic system of pre-speech, speech, translation tasks and exercises has been developed, which is an effective tool for applying in theoretical, practical, and in the integrative courses of Spanish area studies vocabulary. The results of the research can be successfully used to design new courses on Spanish area studies vocabulary, to create teaching and methodical complexes, in the process of teaching foreign languages:

The content of the research is reflected in the structure of the dissertation, which consists of an introduction, two chapters, conclusion, bibliography and applications. The main content of the thesis is set out on 155 pages.

On the topic of the thesis eight scientific articles are published.